

Քրիստինե ԴԱԴՅԱՆ*
Yerevan State University
Ijevan branch

ԷՆՆ ՍԵՔՍԹԸՆ. ԽՈՍՏՈՎԱՆԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՆ ՈՐՊԵՍ ԵՍ-ի ԲԱՅԱՀԱՅՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սույն հոդվածում դիտարկվում են 60-ական թթ. ԱՄՆ-ում մշակույթի և հատկապես պոեզիայի մեջ տեղի ունեցած փոփոխությունները: Անդրադարձ է կատարվում խոստովանական պոեզիայի առանձնահատկություններին, և թե ովքեր են խոստովանող պոետները: Խոսվում է Էնն Սեքսթրնի կյանքից, Մակլին կլինիկայից, որին կոչում էին գրական հոգեբուժարան, նրա այցելուներից, գրողի պոետական վարպետությունից և վերլուծվում են նրա բանաստեղծություններից մի քանիսը: Խոստովանող պոետ Էնն Սեքսթրնն առաջիններից է, որ լիրիկական պոեզիայում արժարժե է այնպիսի թեմաներ, ինչպիսիք են արյունապղծությունը, դավաճանությունը, թմրանյութերից կախվածությունը, և այլն:

Բանալի բառեր. խոստովանող պոետներ, Էնն Սեքսթրն, փորձարարական պոեզիա, ավանդական բանաստեղծություն, անձնական բանաստեղծություն, Մակլին կլինիկա

Ներածություն

Աշխարհի շատ երկրներում, այդ թվում ԱՄՆ-ում տեղի էր ունեցել հեռացում այն պատկերացումից, որ ավանդական ձևերն ու մտքերը կարող են իմաստավորել մարդկային կյանքը: Յուրաքանչյուր գործողություն, ապրում և ակնթարթ ընկալվում էին իբրև անկրկնելի երևույթ: Ոճն ու ձևը դիտարկվում էին որպես հեղինակի գեղարվեստական գործունեությունն ու ինքնագիտակցումը արտահայտող իմպրովիզացիա: Մտքերն արտահայտող սովորական կատեգորիաները սկսում են կասկած հարու-

* gristine.dadyan@ysu.am ORCID: 0009-0001-3475-5888



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 30/01/2024
Revised: 22/04/2024
Accepted: 30/05/2024

© The Author(s) 2024

ցել: Դժվար չէր գտնել Ամերիկայում այս փոփոխությունների պատմական պատճառները՝ Երկրորդ համաշխարհային պատերազմ, ընդդիմադիր շարժում, տասնամյակ ձգվող վիետնամական հակամարտություն: Սակայն ամենից ազդեցիկը՝ զանգվածային տեղեկատվության և մշակույթի ի հայտ գալն էր: Սկզբում՝ ռադիոն, հետո կինոն և հեռուստատեսությունը հիմնովին փոխում են ամերիկյան կյանքը՝ հասարակության շրջանում ձևավորելով մշակութային նոր արժեքներ: Բարձր մշակույթը, որի հիմքում գիրքն էր ու ընթերցանությունը, տարածվում էր: ԱՄՆ-ն դառնում է մի մշակույթի երկիր, որի տարածման միջոցներն էին ռադիոն, խոսակավառակը կամ տեսաժապավենը, ֆիլմն ու հեռուստատեսության կերպարները: Այդ ամենն անմիջական ազդեցություն չի ունեցել ամերիկյան պոեզիայի վրա: Ֆիլմերը, տեսաերիզն ու մագնիտոֆոնը հեշտ ու մասսայական են դարձնում պոետական արվեստը: Բանաստեղծությունները ձայնագրում էին, տեղի էին ունենում հանդիպումներ պոետների հետ: Իսկ արդեն ի հայտ եկած էժան տպագրման մեթոդները երիտասարդ պոետներին հնարավորություն են տալիս իրենք իրենց հրատարակել, իսկ երիտասարդ խմբագիրները սկսում են հրատարակել սեփական գրական հանդեսները (McLuhan, 2016, p. 439):

ժամանակակից ամերիկյան պոեզիան հարուստ է բազմազանությամբ, բայց, այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել երեք հոսող ուղղություն: Ամենաբարձրում ավանդական բանաստեղծության հետևորդներն են, կենտրոնում՝ միայնակ պոետները, որոնց ձայնը խիստ անհատական է, իսկ հակառակ բևեռում պոետ-փորձարարներն են: Ավանդական բանաստեղծության հետևորդները պահպանում են պոետական ավանդների շարունակականությունը կամ ձգտում են նոր շունչ հաղորդել դրան, միայնակ պոետները օգտագործում են, ինչպես ավանդական, այնպես էլ նորարարական տեխնիկան՝ հասնելով պոետական ձայնի անկրկնելիության, փորձարարական պոետները ձգտում են նոր ոճերի:

60-ական թվականներին առաջին շարքում էին, այսպես կոչված, խոստովանող պոետները: Նրանցից էին Ռոբերտ Լոուին, Սիլվիա Փլաթը, Էնն Մեքսթըրը: Նրանց համար ընդհանուր է դառնում դատողությունից, ձևային բարդություններից, դասական պոեզիայից հրաժարումը: Խոստովանական պոեզիայի առանձնահատկություններն են. պատումը վարել առաջին դեմքով, անձնական և ինտիմ թեմաներ, ազատ ոտանավոր և պոետական վարպետություն:

«Խոստովանող պոեզիա» եզրույթն առաջին անգամ օգտագործվել է 1959 թվականին Ռոբերտ Լոուելի «Life Studies» գրքի լույս տեսնելուն պես: Այս բանաստեղծությունները կարդում էին որպես անձնական գաղտնիքներ: Պոեզիան դադարում է լինել իդեալական և մոտենում է ընթերցողին: Մինչ Լոուելի գրքի լույս տեսնելը՝ 1950-ական թվականներին, այնպիսի պոետներ, ինչպիսիք են Ջոն Բերիմենը և Դելմոր Շվարցը, գրում են ստեղծագործություններ, որոնք այսօր համարվում են խոս-

տովանական բանաստեղծություններ: Այնինչ «Life Studies» ոչ միայն մղում է նոր եզրույթ ստեղծելուն, այլև փոխում է պոեզիայի նկարագիրը և մեծ ազդեցություն է ունենում այնպիսի խոշոր գրողների վրա, ինչպիսիք են Սիլվիա Փլաթը և Էնն Մեքսթրընը (Hobsbaum, 2004).

Մեքսթրընը և Մակլինը

Էնն Մեքսթրընը (Էնն Գրեյ Հարվի) ծնվել է 1928 թվականի նոյեմբերի 9-ին Մասաչուսեթս նահանգի Նյուտոն քաղաքում՝ հաջողակ գործարարի ընտանիքում:

Մեքսթրընը ընդունվել է Գարլանդ քոլեջ (կանանց հումանիտար քոլեջ), բայց այն թողել է հենց առաջին կուրսում: Ինչ-որ ժամանակ համագործակցել է Բոստոնի «Hart Agency» մոդելային գործակալության հետ: Այնուհետև՝ 1948 թվականին, փախել և ամուսնացել է 20-ամյա ուսանող Ալֆրեդ Մեքսթրնի հետ: Այդ ամուսնությունից ունեցել է երկու դուստր: Առաջին դուստրը՝ Լինդան, ծնվել է 1953 թվականին: Մեկ տարի անց Մեքսթրընը ունենում է նյարդային խանգարում: Երկրորդ դուստրը՝ Ջոյսը, ծնվել է 1955 թվականին, և Մեքսթրընը հոսպիտալացվել է երկրորդ անգամ՝ դստեր ծննդյան օրը ինքնասպանության փորձի պատճառով:

Մեքսթրընը սկսել է բանաստեղծություններ գրել իր հոգեբույժի խորհրդով, որը նաև նրան առաջարկել է միանալ գրողական սեմինարներին, որ տեղի էին ունենում Բոստոնում Ռոբերտ Լոուելի գլխավորությամբ: Մեքսթրընը սկսում է ուսանել և դառնում է երևելի պոետներից մեկը: Հենց այստեղ էլ ծանոթանում է Սիլվիա Փլաթի հետ:

Մեքսթրնի առաջին պոետական ժողովածուն («To Bedlam and Part Way Back») լույս է տեսնում 1960 թվականին, իսկ 1970 թվականին ստանում է Պուլիցերյան մրցանակ:

1959 թվականին քաղցկեղից մահանում է Մեքսթրնի մայրը, հետո՝ հայրը: Այս իրադարձությունները ազդում են նրա վրա: Կախվածություն է ձեռք բերում այլոհոյից և հանգստացնող դեղերից: Հոգեկան խանգարումը Մեքսթրնների ընտանիքում ժառանգաբար էր անցնում: Մոր նախատատը տառապում էր հոգեկան նոպաներից և շոկային թերապիայի կուրս է անցել: Մեքսթրնի ծնողները տառապում էին հարբեցողությունից: Մեքսթրնի քույրը նույնպես ինքնասպան է եղել՝ շատ քնաբեր ընդունելով: Հորաքույրը 1975 թվականին ինքնասպանություն է գործել ատրճանակով՝ Էննից մեկ տարի հետո: Այս բոլոր օրինակները կարելի է դիտարկել որպես հոգեկան խանգարում, որ փոխանցվում է սերնդեսերունդ:

Շատ տարիներ Մեքսթրընը ուներ մի տարօրինակ ցանկություն՝ հայտնվել Մակլինում: Մակլին կլինիկան երկար տարիներ Ամերիկայի «ամենագրական» հոգեբուժարանն էր: Այստեղ են բուժվել Սիլվիա

Փլաթը, Ռոբերտ Լոուելը և Էնն Սեքսթընը: Մակլին կլինիկան գտնվում էր Բոստոնի արվարձաններից մեկում: «Այն երկրի ամենահին հոգեբուժարանը չէր: Այդ պատիվը վերագրված է Ֆիլադելֆիայի Փենսիլվանիայի հիվանդանոցին: Այն ամենալավն է համարվում» (Бим, 2001): Մակլին կլինիկային անսպասելի հաջողություն է բերում Սյուզան Քեյզերի «Ընդհատված կյանք» ֆիլմը, երբ կլինիկայի տնօրենն էր Ֆրակլին Վուդը: Նա ընդունել է մի հիվանդի, որը Սմիթ քոլեջի շրջանավարտ էր, և նրա անունն էր Միլվիա Փլաթ: Նա տառապում էր ինքնասպանության դեպրեսիայով: Վեց տարի անց բուժման կուրսի ավարտից հետո, 27-ամյա Փլաթը գրում է վեպ «*Under the Glass Hood*» վերնագրով: Երբ այն լույս է տեսնում, դառնում է պարտադիր ընթերցանություն աղջիկների համար, ճիշտ այնպես, ինչպես Ջ. Դ. Սեյնթերի «*Տարեկանի արտում*՝ անդունդի եզրին» վեպը: Փլաթի վեպը կարդում էին հազարավոր ամերիկացի դեռահասներ, այն ձեռքից ձեռք էր անցնում, ընթերցողը վեպի միջոցով ծանոթանում էր Մակլինի ներքին կյանքին, կացութաձևին, կառուցվածքին:

Դասական պոեզիան լավ ճանաչող Լոուելը գրում էր շատ առօրեական, խոսակցական լեզվով, գրում էր կյանքի մասին այնպես, ինչպես տեսնում էր: Մակլինը ոչ միայն թեթևացրել է այս երեք պոետների հոգեկան տանջանքները, այլև տվել է նյութ ստեղծագործելու համար: 40 տարեկանում Սեքսթընը նվաճել էր Պուլիցերյան մրցանակը, բայց Մակլինի տոմսին նա այդպես էլ չէր հասնում: Ինչո՞ւ և հենց այնտեղ: Դե, իհարկե, Փլաթի և Լոուելի պատճառով: Սեքսթընը արտահատված ձևով մրցում էր Փլաթի հետ բոլոր իմաստներով: Նրանք երկուսն էլ մեծացել են Բոստոնի արևմտյան հարուստ թաղամասերից մեկում, երկուսն էլ չափազանց պարզ արտահայտել են իրենց մտքերը, գեղեցիկ էին, սեքսուալ: Երկուսն էլ իրենց նվիրել էին մեծ պոեզիային, տպագրվում էին հարգված ամսագրերում, և երկուսն էլ արժանացել են Պուլիցերյան մրցանակին: Երկուսն էլ գիտեին, որ իրենք էմոցիոնալ առումով անհավասարակշռված են, երկուսն էլ իրենց տեսնում էին որպես ապագա ինքնասպաններ: Միլվիա Փլաթին գտնում են մահացած. նա խեղդվել էր գազից: Կասկած չկար, որ դա ինքնասպանություն էր: Ինչպիսին էր Սեքսթընի «հավատարիմ ընկերուհու» ռեակցիան, երբ լսում է այդ լուրը: Էննը ամենից շատ ցավում էր, որ Փլաթը կյանքից հեռացել է առանց իրեն հրաժեշտ տալու: Իրենք մեկ անգամ չէ, որ քննարկել են մահվան թեման և անգամ փորձում էին կոորդինացնել իրենց գործողություններն այդ ուղղությամբ: Եվ ահա այսպես՝ «առանց թույլվության և խորհրդի»... (Սեքսթըն, 2017) Սեքսթընը գրում է բանաստեղծություն, որտեղ համարյա կշտամբում է նրան և զոջում, առաջին հերթին այն բանի համար, որ նրա հետ չի եղել ինքնա-

սպանություն գործելիս: Ոչ որ չէր կասկածում, որ մի օր Սեքսթընը, այնուամենայնիվ, ինքնասպանություն է գործելու:

*(Միլվիա, Միլվիա
Ու ը գնացիր
կարտոֆիլի բերքատվության
ու մեղուներին ճիշտ պահելու մասին
Ղեկնաչից գրած
այն նամակից հետո)
ինչի ն հենվեցիր
չէ, ո՞նց գնացիր, պատկեցիր ներքում:
Գող...
դու ո՞նց մտար ներս,
մտար մենակով
մահվան մեջ, ում ես սպասել էի
այնքան, այնքան երկար ու շատ...*

(Սեքսթըն, 2017)

1968 թվականին Սեքսթընը հրավեր է ստանում Մակլինի գրադարանավարուհուց՝ Մարգարետ Բոլլից Մակլինում բանաստեղծական սեմինար անցկացնելու: Սեքսթընը ընդունում է հրավերը: Այդ սեմինարների շնորհիվ Սեքսթընը վստահություն է ձեռք բերում և շարունակում դասավանդել: Նրան առաջարկում են դասախոսական պաշտոն Բոստոնի համալսարանում, և նրա պոետական սեմինարները դառնում են այնքան լեգենդային, ինչպես իր դաստիարակ Լոուելի պարապմունքները: Սեքսթընին կյանքի վերջում՝ 1973 թվականին, հոգեկան շատ վատ վիճակում բերում են Մակլին՝ հնգօրյա հետազոտման: Անընդհատ ծխող բանաստեղծուհին Պուլիցերյան մրցանակակիրը, թափառում էր միջանցքներում իր նախկին աշակերտ-պացիենտների հետ: Ինքնասպանությանը մնացել էր մեկ տարի, և նա այդ ժամանակ գրում էր իր վերջին բանաստեղծական ժողովածուն՝ «The Awful Rowing Toward God»:

1974 թվականի հոկտեմբերի 4-ին Սեքսթընը ընթրում է պոետ Մակսին Կուսինի հետ, ընթրիքի ընթացքում քննարկում են Սեքսթընի «The Awful Rowing Toward God» ձեռագիրը, որը նրանք պատրաստվում էին հրատարակել 1975 թվականին: Տուն գալով՝ Սեքսթընը հագնում է մոր մուշտակը, փակվում իր տան ավտոտնակում, գործի դնում սեփական մեքենայի շարժիչը, այդպիսով ինքնասպանություն գործում՝ թունավորվելով արտանետվող գազերից:

Մեքսիկայի բանաստեղծությունները¹

Էնն Մեքսիկայի հոգեբույժն էր Մարտին Թեոդոր Օրնին (անգլ. Dr Martin Orne): Հենց նա է Էննին խորհուրդ տվել գրել բանաստեղծություններ: Էննը պոետական վարպետության դասեր է վերցրել պոետ Ջոն Հոլմսից: Առաջին գրական փորձերը միանգամից նրան հաջողություն են բերում և տպագրվում է այնպիսի հրատարակություններում, ինչպիսիք են «The New Yorker»-ը «Harper's Magazine»-ը և «Saturday Review»-ը:

Մեքսիկայի ազդվել է նաև Ու. Դ. Մոդոգրասից, որի հետ նա ծանոթացել է 1957 թվականին գրողների համաժողովի ժամանակ: Մոդոգրասի «Heart's Needle» պոեմը պատմում է իր երեքամյա դստեր հետ բաժանումի մասին: Այն ոգևորում է Մեքսիկային, որի դստերը այդ պահին դաստիարակում էր սկեսուրը: Նա գրում է «The Double Image» վերնագրով մի պոեմ, որը շոշափում է այնպիսի համամարդկային խնդիր, ինչպիսին մայր ու դուստր խնդիրն է: Մեքսիկայի և Մոդոգրասը նամակագրական կապի մեջ էին, և դառնում են ընկերներ:

Աշխատելով Հոլմսի հետ Մեքսիկայի ծանոթանում է Մակսին Կոմինի հետ, որի հետ դառնում են մտերիմ ընկերուհիներ: Նրանք քննադատում էին միմյանց ստեղծագործությունները, բայց միևնույն ժամանակ համատեղ գրում են չորս մանկական գիրք:

Այդ ժամանակը նախադրում է Մեքսիկայի համագործակցում էր երաժիշտների հետ, դառնում է «Her Kind» ջազ-ռոք խմբի անդամ: Նա «Mercy Street» պիեսն ավարտում է 1969 թվականին: Երաժիշտ Փիթեր Գերրիելային ոգեշնչում է Մեքսիկայի այդ ստեղծագործությունը, և գրում է երգ «Mercy Street» վերնագրով:

Մեքսիկայի իր պոետիկայում համարձակորեն շոշափում է այնպիսի տարու թեմաներ, ինչպիսիք են սեքսը, դաժանությունը, ինքնասպանությունը: Նրա բանաստեղծությունները հաճախ առնչվում են կանանց խնդիրներին՝ երեխա ունենալուն, կանացի մարմնին, ամուսնությանը կնոջ տեսանկյունից: «Of Her Kind» (1960) բանաստեղծության մեջ Մեքսիկայի իրեն նույնացնում է ողջ-ողջ այրված կախարդի հետ.

*I have ridden in your cart, driver,
waved my nude arms at villages going by,
learning the last bright routes, survivor
where your flames still bite my thigh
and my ribs crack where your wheels wind.*

¹ Էնն Մեքսիկայի բանաստեղծությունները մեջբերելիս տեղադրվել են հայերեն թարգմանությունները, իսկ եթե թարգմանված չեն, տեղադրվել են անգլերեն բնագրերը:

*A woman like that is not ashamed to die.
I have been her kind (Sexton, 1981).*

Անդրադառնաք Մեքսթրնի հիասքանչ ստեղծագործություններից մեկին՝ «Սիրեկանիս, որը վերադառնում է իր կնոջ մոտ» բանաստեղծությանը: Բանաստեղծությունը հայերեն է թարգմանել Սամվել Մկրտչյանը (Դժոխք և դրախտ, 1993): Այն փշրված հոգու յուրահասուկ ճիչ է: Քառասունութ տողից է բաղկացած, բաժանված է երկու հատվածի. առաջինում խոսվում է սիրեկանի կնոջ մասին, իսկ երկրորդում ավելի շատ խոսվում է այն մասին, թե ինչպես է այս իրավիճակը ազդում սիրուհու վրա: Բանաստեղծություն, որն ուսումնասիրում է խոստովի բարդ հույզերն ու կոնֆլիկտները: Բանաստեղծության մեջ ընդգծված է անհավատարմության պատճառած ցավը: Հերոսուհին պայքարում է խանդի, կարոտի և ցավի դեմ:

«Սիրեկանիս, որը վերադառնում է իր կնոջ մոտ» բանաստեղծությունը, ինչպես արդեն ասվել է, խոստովանական բանաստեղծություն է: Բանաստեղծության այս տեսակը չունի որոշակի չափ կամ ռիթմ: Մեքսթրնի բանաստեղծությունը գրված է ազատ ոտանավորով և առաջին դեմքով: Այն հասցեագրված է «դու» կերպարին, որը, դատելով վերնագրից, բանաստեղծությունը պատմողի սիրեկանն է: Բանաստեղծության մեջ օգտագործված է անաֆորան: Անաֆորան պոետական հնար է, որը կազմվում է չափածո տողերի և տների սկզբում բառերի կամ շարահյուսական կապակցությունների կրկնությամբ: «Սիրեկանիս, որը վերադառնում է իր կնոջ մոտ» բանաստեղծության տասը տողի մեջ կա «նա» դերանունը, որը վերաբերում է բանաստեղծությունը պատմողի սիրեկանի կնոջը: Այդ կինը բանաստեղծության կենտրոնն է: Պատմողը պատկերացնում է, թե ինչպիսի կին է նա իր ամուսնու համար: Սիրուհին կարծում է, որ հենց այդ կինն է արժանի սիրո այն տղամարդու կողմից, ում հետ ինքը ռոմանտիկ հարաբերություններ ուներ:

Այս բանաստեղծության մեջ յայնորեն օգտագործված է մետաֆորը: Մետաֆորը կամ փոխաբերությունը այն է, երբ բառը գործածվում է ոչ իր սովորական իմաստով՝ մեկ այլ բառի փոխարեն: Սիրուհու և կնոջ միջև կա կտրուկ կոնտրաստ: Սիրուհին, որպեսզի նկարագրի իր սիրեկանի կնոջը, ասում է, որ նրա կինը «հրավառություն է մռայլ փետրվար կեսին» (նույն տեղում, էջ 97): Սա դրական կողմով է ներակայացնում այդ կնոջը՝ արտահայտելով հուզմունք ու կիրք: Իր համար ասում է՝

...բարակավիզ կակղամորթ անժամանակ ծնված (նույն տեղում, էջ 98):

Օգտագործելով այս արտահայտությունը՝ հասկանում ենք, որ իր սիրեկանի համար ինքը «շքեղություն է եղել, բայց ժամանակավոր» (նույն տեղում, էջ 98): Այն ավելի ընդգծված է բանաստեղծության վերջին

տողում: Պատմողը իրեն համեմատում է ջրաներկի հետ, որն ուղղակի անհետանում է: Նա ընդգծում է այն փաստը, որ իր սիրելեանի կյանքում ինքն այլևս տեղ չունի, ինքն այլևս նրա մասնիկը չէ: Ինքը մշտական չէ նրա կյանքում, ինչպես կինը: Պատմողը թեպետ տխրում է, բայց ընդունում է իրականությունը: Բանաստեղծության ողջ ընթացքում Մեքսթրնը բերում է շատ օրինակներ, որպեսզի պատկերի այդ կնոջ կերպարը, որին ինքը խանդում է, որի հետ մրցում էր, ինչպես օրինակ.

*Նա զգուշորեն հայչել է քեզ համար
և բուսնել քո մանկությունից,
քո հարյուրավոր սիրելի խաղալիքներից* (նույն տեղում, էջ 97)

Սիրուհին կերտում է իր սիրելեանի կնոջ կերպարը որպես իդեալական մայր: Դա կարելի է տեսնել այս տողերում.

*Նաև ճաշից հետո գրկել տարել է նրանց
քնեցնելու, գլուխները թույլ ընկած,
նոտքերը դեռևս աշխույժ, և դեմքը նրա
շառագունել է օրորոցայինից ու նրանց անուշ քնից* (նույն տեղում, էջ 98)

Չնայած այն բանի, որ նրանք ծանոթ չեն, պատմողը ստեղծում է ընտանեկան կյանքի մանրամասն ու կոնկրետ պատկեր:

Սյուս բանաստեղծությունը, որ ցանկանում ենք դիտարկել, Մեքսթրնի «Barefoot» բանաստեղծությունն է: Այն կարճ է, կազմված է երկու տնից: Առաջին տունը սկսվում է այսպիսի տողով.

*Loving me with my shoes off
means loving my long brown legs...* (Sexton, 2021)

Սա զգացական և նույնիսկ էրոտիկ բանաստեղծություն է: Ինչպես ենթադրում է բանաստեղծության վերնագիրը, նա բոբիկ է, առանց կոշիկների և ուզում է սիրվել ինչ-որ մեկի կողմից:

Երրորդ տողի մեջտեղում նա ասում է մեզ.

*and my feet, those two children
let out to play naked.* (նույն տեղում, 2021)

Սա ընթերցողին տալիս է զգացողություն, թե ինչքան լավ ու ազատ է նա իրեն զգում առանց կոշիկների:

Բանաստեղծության հաջորդ տողերում նա նույնիսկ սկսում է արտասանել մանակական բանաստեղծություն, բայց հետո վերադառնում

է իր շագանակագույն ոտքերին: Նա ասում է մեզ, որ մենակ է իր սիրեցյալի հետ ծովափին գտնվող տանը:

Ծովը միշտ ներկա է երկրորդ տան մեջ, ընթերցողը կարծես լսում է ծովի ձայնը: Նա շարունակում է ասել.

*And I'm your barefoot **** for a/ whole week.* (նույն տեղում, 2021)

Լիովին հնարավոր է, որ նրանք արձակուրդի մեջ են մեկ շաբաթ: Նա իր սիրեցյալին խմիչք և սնունդ է առաջարկում: Բանաստեղծությունը վերջանում է սիրախաղի ավարտով:

Այս բանաստեղծության թեման ազատությունն է: Բանաստեղծության մեջ նա պաշտում է իր սիրեցյալին և սիրում է քայլել ոտաբոբիկ: Նա փորձում է ասել, որ վայելում է բնությունը, նա սիրում է ծով և ազատություն: Բանաստեղծությունը լիրիկական է, այն ասես երգ լինի:

Էնն Մեքսթրնի «The Red Shoes» բանաստեղծությունը տեղ է գտել 1972 թվականին լույս տեսած «The Book of Folly» ժողովածուի մեջ:

«The Red Shoes» իրականում հիմնված են Հանս Քրիստիան Անդերսենի համանուն հեքիաթի վրա: Այն Մեքսթրնի ստեղծագործության երկրորդ շրջանին է պատկանում, որը սկսվում է «Transformations»-ից (1971), որտեղ պոետը վերաշարադրում է Գրիմ եղբայրների 17 հեքիաթները: Չնայած նրան, որ «The Red Shoes» բանաստեղծությունը պատկանում է մյուս հավաքածուին, նրան հեշտությամբ կարելի է կապել «Transformations» ստեղծագործությանը:

Բանաստեղծությունը սկսվում է հեքիաթի այն տեղից, որտեղ գլխավոր հերոսը իր կարմիր կոշիկներն է կապում: Գլխավոր հերոսը գյուղացի աղջիկ Կարենն է, որը կարմիր կոշիկները հագին թափառում էր անտառով: Այդ կոշիկները ձեռքով էին նորոգված: Մի տարեց կին որդեգրում է աղջկան և նրան նոր հագուստ ու նոր կոշիկներ տալիս, որպեսզի աղջիկը ավելի պատշաճ տեսք ունենա: Կոշիկները կորցնելուց աղջիկը շատ էր ընկճվել, բայց գտել էր դրանք վերադարձնելու միջոցը: Այս պահին հանդիպում են հեքիաթն ու բանաստեղծությունը: Բայց հեքիաթը սարսափելի զարգացում ունի: Աղջիկը, երբ հագնում է կոշիկները, չի կարողանում դադարեցնել պարելը, և վերջում աղջկա ոտքերը կտրում են:

Բանաստեղծության մեջ աղջիկը պատմում է իր պատմությունը: Առաջին տողում նա պատմում է, թե ինչպես է փոխվել ամեն ինչ կոշիկները կորցնելուց հետո.

*Everything that was calm
is mine, the watch with an ant walking*

ինչպես նաև,

*the parlor, white in winter, long before flies,
the lying doe on moss, long before the bullet.* (Sexton, 2009)

«Long before» արտահայտությունը ընդգծում է իրական վիճակի և այն ժամանակի միջև եղած հեռավորությունը: Հիմա ամեն ինչ սպառնալիքի տակ է: Ճանճերով ներկված հյուրասենյակը ներկայացնում է գողացված մաքրություն և անմեղություն: Մյուս կողմից, էգ եղնիկը («the doe») սովորաբար հեքիաթի հերոսի ոգեղեն ուղեցույցն է, և այն մեռած է: Կարմիր կոշիկները կրեատիվության և կրքի խորհրդանիշ են, որոնք ապրում են կնոջ մեջ, մինչդեռ ոտքերը շարժման և ազատության արքետիպային խորհրդանիշ են: Իսկ կոշիկներն այդ.

*Handed down like an heirloom
but hidden like shameful letters.* (նույն տեղում, 2009)

Դեռ ավելին՝

*The house and the street where they belong
are hidden and all the women, too,
are hidden.* (նույն տեղում, 2009)

Հեքիաթի երեխայի նման՝ աղջիկները, ովքեր դժվարություններից հետո կոշիկներ էին հագնում, «բոլորը պարում էին, ինչպես ձուկը կարթի վրա»: Սեքսթոնն արտահայտում է անվերջ, անվերահսկելի շարժման գաղափարը երրորդ տողում, որտեղ նա դիմում է աղջիկներին.

*They were played with.
They tore off their ears like safety pins.
Their arms fell off them and became hats.
Their heads rolled off and sang down the street.* (նույն տեղում, 2009)

Միաժամանակ աղջիկները վերածվել են փլուզվող գլուխկոտրուկների:

*They could not listen.
They could not stop.
What they did was the death dance.
What they did would do them in.* (նույն տեղում, 2009)

Հեքիաթի վերջում երեխան խնդրում է կտրել իր ոտքերը, որպեսզի դադարեցնի ցավոտ պարը, մինչդեռ բանաստեղծության մեջ «մահվան պարի» պատկերը տալիս է նույն մռայլ միտքը:

Մեքսթրնի ամենահուզիչ բանաստեղծություններից մեկը «Ես հիշում եմ» բանաստեղծությունն է: Քնարական հերոսը, հետադարձ հայացք գցելով, նկատում է ինչպես են անցել ամռան սիրո օրերը: Այն երազվոտ հուշ է, ինչպես վերնագրից է երևում: Առաջին 20 տողերը ուրախ ու տաք հիշողություններ են:

*... խմում էինք ջին տաք ու նրբագեղ,
 հին դողդղագոռ բաժակներով մինչև
 արևը կհանգչեր տեսադաշտում,
 ինչպես մի կարմիր նկարած գլխարկ,
 մի օր մազերս հավաքեցի
 ժայպվենով, ու դու ասեցիր,
 որ նման եմ
 մի պուրիտանական կնոջ ու ինչ
 հիշում եմ, լավագույնն էր դա... (Մեքսթրն, 2014)*

21 և 22 տողերը ցույց են տալիս անսպասելի շրջադարձ: Միրահարների դռներն նույնը չեն այլևս, ինչպես այն ժամանակ էր: Ոչ միայն ամառն է ավարտվել, այլ նաև սերը:

*քո սենյակի դուռը
 դուռն էր իմ սենյակի: (նույն տեղում, 2014)*

Մեքսթրնի բանաստեղծությունների մեծ մասը գրվել է որպես փորձ՝ ստեղծելու սեփական եսը և վերյուծելու այն: Այն բնութագրելու համար օգտագործվում են այնպիսի էպիտետներ, ինչպիսիք են մելամաղձությունը, անձև բանաստեղծությունը, հակասությունը:

Եթե Մեքսթրնը չհետևեր ստեղծագործական վարպետության կանոններին, այդ դեպքում նրա բանաստեղծությունները կարելի էր դիտարկել որպես թերապիա, որը փորձում է հավաքել և վերականգնել իրեն ու աշխարհը:

Եթե փորձենք ստեղծել Մեքսթրնի պոեզիայի ձայնային քարտեզը, սկսելով նրա վաղ գործերից («Lullaby») և հասնելով մահից առաջ գրված բանաստեղծությանը («Lessons in Hunger»), այդ դեպքում, նախ և առաջ, կպատկերենք մարդկային զգացմունքների ողջ հարստությունը:

Կրկնվող [ս] հնչյունը բանաստեղծության մեջ առաջացնում է շշուկ: [Ի]-ն ստիպում է զգալ լացն ու ճիչը մարդու, [Օ] հնչյունի օգտագործումը Մեքսթրնի պոեզիայում առկա հառաչանքն է, ինչպես, օրինակ՝

*I was tired of being a woman,
 tired of the spoons and the pots,
 tired of my mouth and my breasts,
 tired of the cosmetics and the silks . . . (Sexton, 2002)*

Թարգմանությունը՝

*Ես հոգնել էի կին լինելուց,
Հոգնել էի գոայներից, ամաններից,
Հոգնել էի իմ բերանից, իմ կրծքերից,
Հոգնել էի շպարից ու մետաքսից: (Մեքսթրն, 2013)*

Մեքսթրնի ուշ շրջանի գործերում տողերի երկարությունը կրճատվում է, օրինակ.

*... Your clouds wear white,
trying to become nuns
and say novenas to the sky... (Sexton, 2006)*

Մեքսթրնը և՛ բարդ է, և՛ պարզ: Նա կանացի է, այստեղից էլ թուլությունը, անպաշտպան լինելը, փխրությունը: Նրա տողերն ասես հոսում են: Մեքսթրնի պոեզիան զվարճալի և միննույն ժամանակ անսահման հուզիչ է, և այն բարձրագույն պոեզիա է:

Եզրակացություն

Պետք է հիշել, որ Մեքսթրնի գրեթե ողջ պոեզիան հիմնված է սեփական ապրումների վրա: Նա այդ ապրումներին տալիս էր գեղարվեստական ձև և կառուցվածք, որոնք վերջին հաշվով դառնում էին ողջ մարդկության ապրումների արտահայտումը: Կատարելագործելով իր բանաստեղծությունները՝ Մեքսթրնը, հնարավոր է, կարողացել է վերահսկել իր զգացմունքերը, որոնք ի սկզբանե սնում էին նրա պոեզիան: Մեքսթրնի պոեզիան սկսվում է ինքնակենսագրությունից և աստիճանաբար զարգանալով՝ փորձում է հեռանալ սեփական կյանքից: 20-րդ դարի պոեզիան շատ բաներով է պարտական Մեքսթրնին հենց միայն նրա համար, որ նա շատ տաքուն էր կոտրել: Գեղարվեստական մեթոդներ, բաց բանաստեղծություններ, իր մասին ամեն ինչ ասելու կարողություն. ահա սրանք շատ լսելի են, երբ կարդում ես Հենն Մեքսթրնի բանաստեղծությունները:

Գրականություն

Hobsbaum, Ph. (2004). Confessional Poetry. Jay Parini and Phillip W. Leininge (Eds.), *The Oxford Encyclopedia of American Literature*. UK: Oxford University Press.

McLuhan, M. (2016). *Understanding Media and Culture: An Introduction to Mass Communication*. Minnesota: University of Minnesota Libraries Publishing.

- Sexon, A. (2021). “Barefoot”. <https://hellopoetry.com/PascalJ/favorites/?tab>
- Sexon, A. (2009). “The Red Shoes”. <https://collettesimone.wordpress.com/2009/12/08/the-red-shoes-by-anne-sexton/>
- Sexon, A. (2006). “As It Was Written”. <https://www.poemhunter.com/poem/as-it-was-written/>
- Sexon, A. (2002). “Consorting with Angels”. *Anne Sexton’s Early Poems*. https://www.lorenwebster.net/In_a_Dark_Time/category/poets/anne-sexton/
- Sexon, A. (1981). *The Complete Poems: Anne Sexton*. Boston: Houghton Mifflin Company. <https://poets.org/poem/her-kind>
- Сравнительный анализ стихотворений Р. Браунинга «Моя последняя герцогиня» и Э. Секстон «Ее род». Добавлена 29.06.2021. <https://www.homework.ru/finished-works/463649/>
- Бим, А. (2001). *Общество безумных поэтов*. Пер. М. Немцова. https://vladivostok.com/speaking_in_tongues/beam.htm
- Դժոխք եւ դրախտ. (1993). *Միրեկանիս, որը վերադարձնում է իր կնոջ մոտ*. Մամվել Մկրտչյան (թարգմ.), Դժոխք եւ դրախտ. Համաշխարհային սիրային քնարերգություն. Երևան, Սահակ Պարթև հրատարակություն. https://tert.nla.am/archive/HAY%20GIRO/Ardy/1981-2000/djoxqevdraxt_1993.pdf
- Էնն Մեքսթոն. (2017). *Միլիտարի մահը. Հասմիկ Միմոնյան (թարգմ.)*. <https://hs-poetry.blogspot.com/2016/09/anne-sexton.html>
- Էնն Մեքսթոն. (2013). *Հրեշտակներին կենակից*. <https://femtranslate.wordpress.com/2013/06/15/>
- Էնն Մեքսթոն. (2014). *Ես հիշում եմ*. Արամ Մամիկոնյան (թարգմ.). <https://www.facebook.com/hasmik.simonian.poetry/photos/a.658384490903250/643771799031186/?type=3>

К. Дадян – Энн Секстон: исповедальная поэзия как средство самопознания. – В данной статье рассматриваются изменения в культуре, особенно в поэзии, в 60-х годах в США. Выявляются особенности исповедальной поэзии и имена поэтов-исповедников. Речь идет о клинике Маклин, которая называлась литературной психиатрической больницей, и ее посетителях, анализируются поэтическое мастерство писателя и некоторые его стихотворения. Исповедальная поэтесса Энн Секстон одна из первых, которая затронула в лирической поэзии такие темы, как кровосмешение, предательство, наркомания и другие.

Ключевые слова: исповедальные поэты, Энн Секстон, экспериментальная поэзия, традиционное стихотворение, бесформенное стихотворение, клиника Маклина

K. Dadyan – Anne Sexton: Unveiling the Self through Confessional Poetry. –

This article dwells upon the changes in American culture and especially in the overall landscape of American poetry in the 60s of the 20th century. It focuses on the peculiar features of confessional poetry and prominent poets who followed that artistic movement in post-war America. The paper also touches upon Anne Sexton's life, McLean – a hospital also conventionally known as America's most literary mental institution, its patients as well as the poet's mastery of poetic expression. The research focuses on conducting an analysis of select poems by Anne Sexton. Confessional poet Anne Sexton was among the first lyric poets that wrote about then-taboo subjects such as incest, adultery, drug addiction, etc.

Key words: *confessional poets, Anne Sexton, experimental poetry, traditional poems, formless poems, McLean hospital*